

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ»
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 76-Լ

21/07/2015թ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ»
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 24-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և ղեկավարվելով «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության կանոնադրությամբ՝ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է .

1. «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 17-ի ««Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության անդամ ապահովագրական ընկերությունների կողմից ԱՊՊԱ ոլորտում իրականացվող գովազդի նկատմամբ պահանջների կանոնները հաստատելու վերաբերյալ» թիվ 24-Լ որոշմամբ հաստատված ««Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության անդամ ապահովագրական ընկերությունների կողմից ԱՊՊԱ ոլորտում իրականացվող գովազդի նկատմամբ պահանջների» RL 1-011 կանոններում (այսուհետ՝ Կանոններ) կատարել լրացում՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշմամբ Կանոններում կատարված լրացումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցման հաջորդող օրը:

**«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ՝**

Ներսես Երիցյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի 21/07/2015թ թիվ 76-Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ

_____ Ներսես Երիցյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում

«___» _____ 2015թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____ Արթուր Զավադյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-011

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՊՊԱ
ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՎԱԶԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ)

(ԼՐԱՑՈՒՄ)

1. 1-ին կետի 9-րդ ենթակետը «կիրառման» բառից հետո լրացնել «կամ հետագայում օրենքով կամ Բյուրոյի կանոններով իրեն վերապահված որևէ իրավունքից չօգտվելու վերաբերյալ» բառերով: